ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/57» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

05.08.2019թ.
ժամը 11[00]

ք. Երևան

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան,

Գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կոկտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ Գ. Ոսկյան,

ՀՀ ԶՈՒ ԹՎ իրային ծառայության իրային գույքի պլանավորման և ապահովման բաժնի ավագ սպա, կապիտան Վ. Բարսեղյան,

ՀՀ ԶՈՒ ԹՎ իրային ծառայության պահեստների, տեխնիկական միջոցների և բաղնիքալվացարանային ապահովման բաժանմունքի ավագ ինժեներ, կապիտան Է. Սարգսյան,

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ Ա. Հովհաննիսյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/57» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Հովհաննիսյան)

1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության և դրանց՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության և դրանց՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Հովհաննիսյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/57» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին մասնակիցների համապատասխանությունը հավաստող՝ «Դոստ Ինթերնեյշընալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերն առկա են, սակայն այդ փաստաթղթերի և վերոնշյալ պահանջների միջև առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

«Դոստ Ինթերնեյշընալ» ՍՊԸ-ի կողմից 1-ին չափաբաժինի մասով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում նշված չեն՝

1. տեխնիկական բնութագրի՝ ԳՈՍՏ 28546-2014: չափանիշը,
2. ընդ որում ամբողջ խմբաքանակի 40%-ը ելակի հոտով, 30%-ը յասամանի հոտով և 30%-ը կիտրոնի հոտով նախադասությունը,
3. Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը համաձայնեցնելու համար նախադասությունը,
4. Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար ՀՀ ԶՈՒ ՌԲՎ հիգիենիկ և համաճարակային անվտանգության ծառայությունը պետք է իրականացնի նշված ապրանքատեսականու բաղադրության և որակի վերաբերյալ լաբորատոր հետազոտություն: Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումը ըստ ԳՈՍՏԻ նախադասությունները:

«Դոստ Ինթերնեյշընալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նմանատիպ պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերի (հանձման-ընդունման արձանագրություն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը բացակայում են:

1.2 Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ 05.08.2019թ. գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և մասնակցին ծանուցել անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: Սահմանված ժամկետում մասնակիցը շտկել է արձանագրված անհամապատասխանությունները, և 07.08.2019թ. նիստը շարունակվել է:

1.3 Քանի որ 31.07.2019թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցը ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 2000 (երկու հազար) ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություններ, որոնք սակայն չեն գերազանցում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը, ուստի հանձնաժողովը որոշեց մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող:

1.4. 07.08.2019թ., հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, գնահատող հանձնաժողովը որոշեց «Դոստ Ինթերնեյշընալ» ՍՊԸ որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/57» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Հովհաննիսյան)

Հանձնաժողովը որոշեց հայտարարել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/57» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքները և հաստատել կնքվելիք պայմանագրի մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը՝ ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Հ.Մելիքյան

Գնահատող Գ. Ուստյան

Գնահատող Վ. Բարսեղյան

Գնահատող Է. Սարգսյան

Գնումները համակարգող՝ Ա. Հովհաննիսյան